

ամբողջությունների պատկերը վերականգնող մի հետախույզ բնականաբար կարող էր ստանալ,—և մանավանդ գործունեություն վերջին շրջանում ստացավ,—նաև սխալ տպավորություններ իր ուսումնասիրած որոշ երկերի կապակցությամբ, սակայն նա միշտ ունեկեղծ էր քննադատությանը և համախ ինքն անդրադարձել իր սխալներին:

Օրինակելի աշխատասիրությունն ու անձնըվեր սերը մեծարդատա մատենագրության նկատմամբ ուղեկցեցին ծերունագարզ գիտնականին մինչև կյանքի վերջին տարիները և նա սպազա հրատարակիչներին կտակեց շուրջ մեկ ասանյակ անտիպ գործեր, որոնք նոր լույս են տփռելու հայագիտության զանազան աւարկաների վրա:

Ձեռագիր միջնակում են գտնվում հանգույցյալի՝ «Մատենակագրություն հայ գաղթական

նութեան ի երիմ (1300—1700)», «Սուրեն Կալիստենէսի Ազգերանդրի վեպը հայ թարգմանութեամբ ըստ հնագոյն իմբագրութեան», «Պատմութիւն հայ թարգմանութեան ոտարակաու բնագիրներու» (408—1800), «Պատմութիւն հայ մատենագրութեան» (408—1800) երեք հատորից, Գալեմբարյան-Ակիւնյան «Հայերէն տպագրութիւններ առաջին 300 տարիներու» (1512—1812) և այլ գործեր:

Ը. Տաշյան, Ն. Ազոնց, Գ. Հոգսեփյան, Գ. Տեր-Մկրտչյան, Ն. Մառ, Յ. Մարկվարտ, Մ. Արեղյան, Ը. Աճառյան, Սա. Մալխազյանց՝ անձնական ծանոթներն ու զբոսկիցներն են եղել բազմաշիտտ գիտնականի, որի հիշատակը կապրեցնեն իր անհուն գրչի արտագրաները:

Գ. ԱՐԿԱՐՅԱՆ

Վ.Լ.Ա.Գ. ԲՐՆԵՐՅԱՆՈՒ

Նոյեմբերի 8-ին Բուխարեստում մահացավ Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի անվանի գիտնական, վաստակավոր հայագետ ԿրոՖ. Գ-ր Վլադ Բրնեցյանուն:

Պրոֆ. Բրնեցյանուն ծնվել է 1900 թ. օգոստոսի 22-ին Ռումինիայի Տիմիշոարա բաղաբում: Չերնովիցի համալսարանը ավարտելուց նետո, նա իր մատնագիտական ուսումը շարունակել է Փարիզում, Լոնդոնում և Գուրլինում (1924—1932 թթ.): Ստացել է իրավաբանական գիտությունների դոկտորի (1923) և բանասիրական գիտությունների դոկտորի (1931) գիտական աստիճաններ:

Բրնե լեզվաբան նա հմուտ էր հնդեվրոպական համեմատական լեզվաբանության մեջ և տիրապետում էր բազմաթիվ լեզուների (սանսկրիտ, հայերեն, հին պարսկերեն, հունարեն, լատիներեն, հուանդերեն, ալբաներեն, կելտական լեզուներից՝ գալլերեն ու իռլանդերեն, սլավոնական լեզուներ, այդ թվում նաև ոուսերեն, եվրոպական նորագույն լեզուներ և այլն): Պրոֆ. Վլադ Բրնեցյանուի գիտամանկավարժական գործունեությունը հատկապես մեծ թափ ստացավ Ռումինիայում ժողովրդագրեմոկրատական կարգեր հաստատվելուց հետո: Նա Բուխարեստի համալսարանում նշանակվեց հնդեվրոպական լեզուների համեմատական հրնչյունարանության, ձևարանության և շարահայտության, օսկերենի և ումբրերենի ու հին պարսկերենի դասախոս 1954 թ. սկսած դասախոսել է նաև Բուխարեստի մանկավարժական ինստիտուտում: 1958 թ. ստանձնել է նաև Ռու-

մինիայի գիտությունների ակադեմիայի հնդեվրոպական լեզվաբանության սեկտորի վարչի պաշտոնը:



Անվանի գիտնականը երկար տարիների իր բեղուն և բազմաբովանդակ ստեղծագործական կյանքի մի մասը նվիրարերեց հայագիտությանը: Նա աշակերտել էր այնպիսի պատկառելի հայագետների, ինչպիսիք են Ա. Մեյնե, Ֆր. Մակլերը, Ն. Յորդան, Լ. Մարիեսը և ուրիշներ, աշխատակցել նրանց հետ:

Պրոֆ. Բրնրցյանուն առաջին ուսմանացի գիտնականն էր, որ քաջածանոթ էր հայ հին ու նոր լեզուներին և ազատորեն օգտվում էր հայկական աղբյուրներից: Նա էր Ռուսիայի համալսարանի հայոց լեզվի և գրականության առաջին դասախոսը: 1948—1953 թթ. Ռուսիայի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում գասախոսում էր հայագիտական առարկաներ, իսկ վերջին տարիներին համալսարանի բանասիրական ֆակուլտետում շարունակում էր հայագիտական կադրեր պատրաստելու գործը:

Պրոֆ. Բրնրցյանուի գրչին են պատկանում շուրջ 190 գիտական աշխատություններ, որոնցից 90-ը հայագիտական բնույթի են: Նրա գործերից շատերը լույս են տեսել ինչպես Ռուսիայում, այնպես էլ ՍՍՌՄ-ում և արտասահմանյան մի շարք երկրներում՝ ումիներեն, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, պարսկերեն և այլ լեզուներով:

Հայ դասական լեզվի ուսումնասիրությանը է նվիրված պրոֆ. Բրնրցյանուի «Հունարևոյ դերբայներով կազմված դարձվածների հայերեն թարգմանությունը» ծավալուն արժեքավոր գործը (ֆրանսերեն), «Ուրարտական ածանցները դասական հայերենում» (ֆրանսերեն և անգլերեն) և այլն: Պատմա-բանասիրական բնույթի գործերից առավել ուշագրավ են նրա «Հայերը Բեհիսթունի արձանագրության մեջ» (ֆրանսերեն), «Հայ ժողովրդի ծագման մի քանի խրնգիրներ» (ռուսերեն) և այլն: Մեծարժեք են ումիներեն հայ պատմության նվիրված նրա աշխատություններից «Հայերը ումիներեն պատմության և կյանքի մեջ» (սումերերեն), «Հա-

յերը ումիներեն տեղանունների մեջ և հայկական ծագումով ումիներեն տեղանուններ» (հայերեն, ումիներեն) և շատ ուրիշներ: Ավելի քան քառորդ դար շարունակ պրոֆ. Բրնրցյանուն միաժամանակ հանդես էր գալիս հայագիտական արժեքավոր գեկուցումներով, ակտիվորեն մասնակցում ումիներեն հայագիտական կյանքին, աշխատակցում «Սոր կյանք» հայերեն թերթին:

1960 թ. աշնանը անվանի հայագետը մասնակցեց Մոսկվայում գումարված արևելագիտական միջազգային կոնգրեսին, ապա հրավիրվեց Հայաստան: Երևանում նա հանդես եկավ մի շարք գեկուցումներով և սերտ կապեր մշակեց հայագիտական հիմնարկների և առանձին գիտնականների հետ: Հայաստանից վերադառնալով, պրոֆ. Բրնրցյանուն իր գործունեության վերջին երեք տարիների մեծ մասը նվիրեց հայագիտության հարցերին: Բազմաթիվ են ուրազմալեզու նրա այն հոդվածները, որ վերջերս հրատարակեց ինչպես Ռուսիայի, այնպես էլ արտասահմանյան գիտական հանդեսներում և որոնք նվիրված են հայագիտական հիմնարկների աշխատանքներին և սովետահայ անվանի գիտնականների գործերին: Պրոֆ. Բրնրցյանուն Հայաստանի գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդես»-ի խմբագրական կոլեգիա:ի անդամ էր:

Հայ գիտական հասարակայնությունը ըստ արժանվույն գնահատում է ումիներեն անվանի գիտնականի, նվիրված հայագետի գործունեությունն ու գիտական վաստակը:

Ս. ՔՈՒԱՆՁՅԱՆ